Կարգապահական գործ թիվ ԿԳ-17138

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մարտի 6-ի թիվ 47-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/33-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱԹԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, **Խորհրդի անդամներ**՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սաթենիկ Մանուկյանին (արտոնագիր՝ թիվ 145) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ նաև՝ Դպրոց**) կողմից 30.10.2017թ. ներկայացված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սաթենիկ Մանուկյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) 2017թ. առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 07.11.2017թ. թիվ 388-Ա/ԿԳ-17138 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Սաթենիկ Մանուկյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

14.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի մարտի 6-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել: Պատասխանողը, թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Պալատի խորհրդի՝ «Փաստաբան Սաթենիկ Մանուկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 12.12.2017թ. թիվ ԿԳ/118-Ա որոշմամբ: Պատասխանողը մեղավոր է ճանաչվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար և նրա նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառվել է փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցումը:

Նշված փաստը հաստատվում է Պալատի Խորհրդի 12.12.2017թ. թիվ ԿԳ/118-Ա որոշմամբ:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.12.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Սաթենիկ Մանուկյանի (արտոնագիր 145, ստացված՝ 21.05.2001թ.) նկատմամբ 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում 22 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (22 ավարտված վարույթ), որոնցից չորսը Պալատի Խորհրդի 27.08.2007թ. թիվ 13/4, 29.08.2008թ. թիվ 14/5, 13.11.2009թ. թիվ 28/6 և 09.08.2011թ. թիվ 16/3 որոշումներով կարճվել է (կիրառվել է արտոնություն): Սաթենիկ Մանուկյանը 19.05.2011թ. թիվ 10/3 որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է պատասխանատվության նկատողության, իսկ 02.04.2012թ. թիվ 1/12003ԿԳ, 29.10.2012թ. թիվ 18/ԿԳ , 21.05.2013թ. թիվ 22ԿԳ/1, 16.10.2013թ. թիվ 33ԿԳ/1, 14.02.2014թ. թիվ 10ԿԳ/1, 24.10.2014թ. թիվ 174/1, 25.03.2015թ. թիվ ԿԳ/43-Ա և 25.03.2015թ. ԿԳ/44-Ա որոշումներով՝ խիստ նկատողության ձևով: 28.09.2015թ. թիվ ԿԳ/122-Ա, 06.10.2015թ. թիվ ԿԳ/141-Ա, 03.03.2016թ. թիվ ԿԳ/48-Ա, 12.12.2016թ թիվ ԿԳ/193-Ա, 04.04.2017թ. թիվ ԿԳ/36-Ա, 22.08.2017թ. թիվ ԿԳ/76-Ա, 05.12.2017թ. թիվ ԿԳ/106-Ա որոշումներով անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Սաթենիկ Մանուկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամի չափով, 15.000 ՀՀ դրամի չափով, 20.000 ՀՀ դրամի չափով, 20.000 ՀՀ դրամի չափով, 25.000 ՀՀ դրամի չափով, 30.000 ՀՀ դրամի չափով, 35.000 ՀՀ դրամի չափով: 11.12.2015թ. թիվ ԿԳ/197-Ա որոշմամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար Սաթենիկ Մանուկյանն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության ձևով: 12.12.2017թ. թիվ ԿԳ/118-Ա որոշում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Սաթենիկ Մանուկյան ենթարկվել է կարգապահական պատասխանատվության արտոնագրի գործողությունը դադարեցման ձևով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սաթենիկ Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է:*

Տվյալ դեպքում Պատասխանողի արտոնագրի գործողությունը դադարեցվել է Պալատի խորհրդի՝ «Փաստաբան Սաթենիկ Մանուկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 12.12.2017թ. թիվ ԿԳ/118-Ա որոշմամբ:

Նշվածը հաշվի առնելով, Խորհուրդը գտնում է, որ առկա է Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական գործի վարույթը կարճելու հիմքը:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում Սաթենիկ Մանուկյանի կողմից պարտադիր վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու վարքագիծը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Սաթենիկ Մանուկյանի նկատմամբ 07.11.2017թ. թիվ 388-Ա/ԿԳ-17138 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Սաթենիկ Մանուկյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Մելանյա Առուստամյան**

06 մարտի 2017թ.
թիվ ԿԳ/33-Ա
ք. Երևան